ԼՐԱՏՈՒ ХРОНИКА

ԳԻՏԱԿԱՆ ՆԻՍՏ՝ ՆՎԻՐՎԱԾ ԶԵՅԹՈՒՆԻ 1862 ԹՎԱԿԱՆԻ ԱՊԱՍՏԱՄԲՈՒԹՅԱՆ 100-ԱՄՅԱԿԻՆ

1962 թ. հոկտեմբերի 5-ին կայացավ Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Պատմության ինստիտուտի գիտական նիստը՝ նվիրված Զեյթունի 1862 թ. հերոսական ապստամբության 100-ամյակին։ Ակադեմիայի կոնֆերենց-դահլիճում հավաքվել էին գիտնականներ, գրողներ, մայրաքաղաքի աշխատավորության ներկայացուցիչներ և մեծ թվով հյուրեր Հարավային Ամերիկայից, Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգներից, Ֆրանսիայից և արտասահմանյան այլ երկրներից։

Բաց անելով նիստը, Հայկական ՍՍՌ ԳԱ պրեզիդենտ, ակադեմիկոս Վ. Հ. Համբարձումյանը նշեց, որքան էլ ողբերգական է եղել Զեյթունի հետագա պատմությունը, այնուամենայնիվ նրա 1862 թ. հաղթական ապստամբությունը արդարացիորեն դիտվում է որպես հայ ժողովրդի պատմության կարևորագույն և ուրախալի փաստերից մեկը։ Այդ հաղթանակը նոր հույս և վստահություն ներշնչեց հայ աշխատավոր զանգվածներին, վկայելով, որ աշխատավոր ժողովուրդն իր պայքարով կարող է հասնել մեծ արդյունքների, թեև հաճախ գանվում է անբարենպաստ, համարյա անելանելի պայմաններում։ Ապստամբությունը բարձրացրեց հայ ժողովրդի ինքնագիտակցությունը։ Զեյթունի աշխատավոր ժողովրդի արյունն իզուր չի թափվել։ Զեյթունցիների պայքարը հանուն ազատության և մարդկային արժանապատվության խաղացել է իր կարևոր դերը հայ աշխատավորության հեղափոխական գիտակցության զարգացման գործում։ Այսօր Սովետական Հայաստանը գտնվում է աննախընթաց վերելքի ճանապարհին։ Նա երբեք չի մոռանում անցյալի ազատագրական պայքարի քաջ հերոսներին։ Չի մոռանում նաև Զեյթունի բաջերին։ Երևանի շրջակայքում մեկ ու կես տասնամյակ առաջ հիմնադրվեց նոր Զեյթուն։ Հետագայում, շնորհիվ մայրաքաղաքի զարգացման սննախընթաց թափի, վերջինս իր մեջ առավ նոր Զեյթուն։ Նա դարձավ Երևանի թաղերից մեկը։ Մի՞թե օրինաչափական չէ այն, որ Զեյթունը դարձավ Սովետական Հայաստանի մայրաքաղաքի մասերից մեկը։ Իհարկե օրինաչափական է։ Դրանով հենց Զեյթունը մասնակից է այն մեծ ստեղծագործական աշխատանքին, որ կատարվում է Հայաստանում այսօր։

Վ. Համբարձումյանի բացման խոսքից հետո «Զեյթունի 1862 թվականի հերոսամարտը» թեմայով զեկուցեց Հայկական ՍՍՌ ԳԱ ակադեմիկոս Մ. Տ. Ներսիսյանը (զեկուցման տեքստը տպագրվում է Պատմա-բանասիրական հանդեսի սույն համարում)։

Այնուհետև պատմական գիտությունների թեկնածու Վ. Մելիքսեթյանը հանդես եկավ «Դրվագներ Զեյթունի պաշտպանական կռիվներից» զեկուցումով։ Նա խոսեց Թուրքիայի տիրապետության տակ գտնվող Արևմտյան Հայաստանի սոցիալ-տնտեսական ու քաղաքական ծանր դրության և Օսմանյան կայսրության մեջ XIX դարի կեսին բռնկված ազգային-ազատագրական շարժումների մասին։ Զեկուցողը շարադրեց 1862 թ. ապստամբության պատմությունը և կանգ առավ զեյթունցիների նաև 1878, 1884, 1894—1895 թթ. հերոսամարտերի վրա։ Զեյթունը երկար ժամանակ կանգուն մնաց, միայն 1915—1916 թթ. նրա, ինչպես և ամբողջ Արևմտյան Հայաստանի հայ բնակչությունը մասսայական կոտորածի ենթարկվեց։

«Զեյթունի ապստամբության արձագանքները հայ իրականության մեջ» թեմայով զեկուցեց պատմական գիտությունների թեկնածու Հ. Ղազարյանը։ Նա խոսեց ապստամբության՝ հայ իրականության մեջ գտած արձագանքների, նրա ազդեցության տակ առաջացած շարժումների մասին։ Ապստամբության ազդեցությամբ ալեկոծվեց Թուրքահայ գավառը, մի պահ կենդանացավ ու պայքարի ճանապարհ բռնեց գավառահայությունը։ Ապստամբությունը ջերմ արձագանք գտավ հայ դեմոկրատ մտավորականների շրջանում։ Այդ հերոսամարտը երգեցին Բաֆֆին, Ն. Ռուսինյանը, Մ. Պեշիկթաշլյանը, Ս. Շահազիզը, Ռ. Պատկանյանը, Հով՛աննես

Մկրյանը և շատ այլ հայ բանաստեղծներ ու գրողներ։

Գիտական նիստի վերջում հանդես եկավ Մոնտեվիդեոյում բնակվող զեյթունցիների հայրենակցական միության նախագահ Արիս Ահարոնյանը, որը ջերմ շնորհակալություն հայտնեց նիստի նախաձեռնողներին և ուրախությամբ նշեց այն հանգամանքը, որ այսօր Սովետական Հայաստանի հոյակապ ստեղծագործական աշխատանքին մասնակցում էն նաև շատ զեյթունցիներ։

Մ. ՄԵԼՔՈՆՅԱՆ

ԵԳԻՊՏԱԳԵՏ ԱՐԻԱԿ ՄԽԻԹԱՐՅԱՆԸ ԵՎ ԿՈՄԻՏԷ ԴԷ ԱՇՈՏ ՊԱՏՄԱԳԻՏՅԱՆԸ ԵՐԵՎԱՆՈՒՄ

Բելգիայի Էլիզաբեթ թագուհու անվան Եգիպտագիտության հասարակության ընդհանուր քարտուղար եգիպտագետ պրոֆ. դ-ր Արիակ Մխիթարյանը, որը միջազգային եգիպտագիտության հայտնի գեմբերից է, ս. թ. հոկտեմբեր ամսին շուրջ երեք շաբաթ անցկացրեց Երևանում, մի շարք հանդիպումներ ունեցավ Գիտությունների ակադեմիայի Արևելագիտության սեկտորի և Հնագիտության ինստիտուտի գիտական աշխատողների, ինչպես նաև Հայաստանի ճարտարապետների հետ։

Դոկտ. Ա. Մխիթարյանը ծնվել է 1911 թ. Եգիպտոսի Տանտա քաղաքում։ Իր սկզբնական և միջնակարգ կրթությունը նա ստացել է Ասիութի և Կահիրեի պետական վարժարաններում և 1925 թ. մեկնել Բելգիա՝ մասնագիտական ուսման համար։ Բրյուսելի համալսարանի Հնագիտության և պատմագիտության ֆակուլտետը ավարտելուց հետո, 1929 թ. նշանակվում է հայտնի եգիպտագետ Ժան Գապարտի օգնական, նրա ստեղծած Էլիզաբեթ թագուհու անվան Եգիպտագիտության հասարակության մեջ, իսկ 1947 թ., Ժան Գապարտի մահվանից հետո, նա ստանձնում է ընդհանուր քարտուղարի պաշտոնը, որը և վարում է մինչև այսօր։

Դոկտ. Ա. Մխիթարյանը իր կատարած բազմամյա պեղումներով զգալի չափով նպաստել է հին Եգիպտոսի պատմության մի շարք հարցերի լուսաբանմանը։ 1930, 1934, 1937, 1942 և 1945—1947 թթ. իբրև Ժան Գապարտի անմիջական գործակից, նա մասնակցել է Եգիպտոսի պեղումներին, իսկ 1947—1951 և 1953—1955 թթ. նա գլխավորում է պեղումները մի շարք հնագարյան եգիպտական քաղաքներում, առանձնապես Էլ-Քարում, կատարելով նշանակալից հայտնագործումներ։ Բելգիական ընկերությունս առանձին հատորով լույս է ընծայել Էլ-Քաքի վիմական արձանագրությունները, որոնց հայտնագործումը և ընթերցումը կապված է Ա. Մխիթարյանի անվան հետ։ Իր կատարած պեղումների արդյունքների մասին նա բազմաթիվ հոդվածներ է հրատարակել նաև բելգիական եգիպտագիտական հանդեսում։ Բացի այդ, տարբեր ժամանակներում, նա Եգիպտոսի բազմադարյան կուլտուրայի պատմության մասին դասախոսություններ է կարդացել Եգիպտոսում, Բելգիայում, Հոլանդիայում, Շվեյցարիայում և այլ երկրներում։ Բարձր գնահատելով դոկտ. Ա. Մխիթարյանի՝ եգիպտագիտությանը մատուցած աչքի ընկնող ծառայությունները, եգիպտական կառավարությունը նրան պարգևատրել է Էլ-Մաարեֆի պատվանշանով։

1962 թ. հոկտեմբերի 9-ին, Հայաստանի ԳԱ Արևելագիտության սեկտորի և Հնագիտության ինստիտուտի հրավերով, դոկտ. Ա. Մխիթարյանը հանդես եկավ «Հին Եգիպտոսի հուշարձանները» զեկուցումով։ Հենվելով պեղումներից ձեռք բերված բազմահարուստ նյութի վրա, նա արժեքավոր տեղեկություններ հաղորդեց հին Եգիպտոսի դամբարանային, տաճարային և բնակարանային ճարտարապետության մասին, առանձին ուշադրություն ընծայելով Գառնակի և Թեբեի ճարտարապետական կոթողներին։ Դրանցում պահպանված առավել նշանավոր որմնանկարների, բանդակների, արձանների, ինչպես նաև գերեզմաններից հայտնաբերված տարբեր իրերի լուսանկարները մոգական լապտերով ցուցադրելով, դոկտ. Ա. Մխիթարյանը հետաքրքրական մանրամասնություններ հաղորդեց ոչ միայն հին Եգիպտոսի մշակույթի, այլև հին եգիպտացիների հասարակական կազմի, նրանց առօրյա կյանքի, աշխատանքային պատմանների, սովորույթների և այլ հարցերի մասին։

Հաղորդումն ավարտելուց հետո, ընդառաջելով ներկաների ցանկությանը, դոկտ. Ա. Մխիթարյանը բացատրություններ տվեց Բելգիայում հայագիտության ծագման և զարգացման մի շարք հարցերի, ինչպես նաև այդ բնագավառում ձեռք բերված արդյունքների մասին։

Ս. ԹՈՓՉԻԶՅԱՆ

* * *

Սփյուռքահայ երաժշտական կյանքում Աշոտ Պատմագրյանը զբաղվում է իր առանձնահատուկ տեղը։ Ավելի քան քառասնամյա երաժշտական բեղմնավոր գործունեության ընթացքում Պատմագրյանը հանդես է եկել իբրև կոմպոզիտոր, մանկավարժ, խմբավար, երաժշտական գործիչ և երաժշտագետ։ Նա հայ երաժշտությանը նվիրված բազմաթիվ համերգներ է տվել ու դասախոսություններ կարդացել Երևանում, Եգիպտոսում, Սիրիայում, Լիբանանում, Պաղեստինում, Ամերիկայի ու Եվրոպայի շատ երկրներում։

Աշոտ Պատմագրյանը «Երաժշտարան» դասագրքի հեղինակն է։ Այստեղ նա երաժշտական տրենքների ուսուցումը կիրառում է մանկական խաղերի միջոցով։ Այս գիրքը լույս է ընծայված Երևանում, հայերեն և պարսկերեն, և Իրանի Լուսավորության մինիստրության կողմից ընդունված է որպես դասագիրք։ 1954 թ. Քեմբրիջում կայացած՝ արևելագետների XXIII միջազգային համագումարին Պատմագրյանը ներկայացնում է «Ժողովրդական արվեստի տարրերի գործածությունը հայ եկեղեցական երգի մեջ XII դարում» հետաքրքիր զեկուցումը։

Բարձր գնահատելով Աշոտ Պատմագրյանի գործունեությունը, սփյուռքահայերը բազմաթիվ բաղարներում մեծ շուքով տոնեցին նրա քառասնամյա հոբելյանը։ Հոբելյանի հետ կապված բոլոր նյութերն ամփոփված են «Աշոտ Պատմագրյանի հոբելյանը» գրքում, որը լույս է ընծայվել Բեյրութում, 1962 թ.։

Այս տարվա սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին Աշոտ Պատմագրյանը գտնվում էր Սովետական Հայաստանում։ Այդ օրերին նա հանդիպում ունեցավ սովետահայ կոմպոզիտորների հետ, եղավ Հայկական Մանկավարժական ինստիտուտում, Գիտությունների ակադեմիայի Արվեստի ինստիտուտում, Սայաթ-Նովայի անվան երաժշտական դպրոցում, Արվեստի աշխատողների տանը, դասախոսություն կարդաց «Հայ ժողովրդական երգը» թեմայի մասին, ունեցավ մի շարք այլ հանդիպումներ, որոնց ընթացքում հայրենի երաժշտասեր հասարակությունը հնարավորություն ունեցավ ծանոթանալու նրա ստեղծագործական և մանկավարժական գործունեության հետ։

Հ. ԴՐՔԱՇԱՐՅԱՆ